

պաղէն սկսելու է, ու տաքութիւնը կամաց կամաց աստիճանաբար աւելցընելու է: — Ինչ որ մինչեւ ցայժմ բոլոր մարմնոյն համար ըսինք, նոյնը պէտք է ընել նաեւ երբոր մէկ անգամը միայն սառած է, այսինքն առաջ ձիւնով շփել, եւ այլն:

Կախուկելով խզգուած մարդը կենդանացընելու համար՝ պէտք է զինքը առանց ցընցելու բաց տեղ դնել, գլուխը բարձր. հանուեցընել ու առատ արիւն առնուլ: Կարելի է, արեան շրջանը շարժելու եւ շնչառութիւնը սկսել տալու համար մարմինը շփել, եւ փսոզական դեղ ու գրեխ տալ: — Եթէ վզին վրայ չուանին տեղը ոչ կարմիր է եւ ոչ կապոյտ, այլ մորթի գունով, նշան է թէ մարդը առաջ մեռած է ուրիշ պատճառով մը, եւ յետոյ կախուած է:

Կայծակէ զարնուած մարդուն վրայ եթէ

կենդանութեան նշան տեսնուի, պէտք է զինքը բաց օդի մէջ դնել, երեսը ջուր փչել եւ մարմինը բրդեղէն լաթով մը շփել: Ռամկաց մէջ սովորութիւն մը կայ, որ գէշ չէ, այսինքն փոս մը փորել ու հիւանդը անոր մէջ թաղել մինչեւ վիզը. բայց նայելու է որ փոսը քովնտի փորուի եւ մարմինը աջ կշտին վրայ ծռած դրուի. իսկ արիւնն այն ատենը միայն պէտք է առնուլ, երբ յայտնի տեսնուի թէ արիւնը գլխուն զարկած է:

Ածուխէ կամ կրակէ զարնուած ու անշնչացած մարդը պէտք է բաց օդի հանել՝ հանուեցընել, նստեցընել, երեսին ու կուրճին պաղ ջուր սրսկել, արիւն առնուլ ոտքէն՝ երբեմն նաեւ վզէն, մարմինը քացախով շփել, քացախով գրեխ տալ, բերնին մէջը փչել որ շնչառութիւնը սկսի, եւ եթէ յաջողի՝ լեմոնաջուր խմցընել:

Բ Ա Ն Ա Լ Ի Բ Ն Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

ԲԵԿՏՈՒՄՆ ԼՈՒՍՈՅ.

(Նարայարութիւն)

Ի՞նչ է գոյնը:

— Մէկ առարկայէ մը ցլացած լուսոյն մարդուս աչքին վրայ ըրած տպաւորութիւնն է:

Ինչո՞ւ համար ծովուն գոյնը երբեմն կանաչ կերելի:

— Վասն զի Ա, ջուրը կապոյտ գոյնը ետ կցողացընէ, եւ կանաչը կծրծէ ու աւազին կհաղորդէ. անով աւազը կանաչ կերելի, եւ անոր Ֆառագայթները նորէն ջրին մէջէն անցնելով՝ կանաչ գոյնը աւելի շատ կտեսնուի քան թէ ջրին բնական կապոյտ գոյնը.

Բ. երբոր ջուրը շատ խոր չէ, ծովուն տակի դեղին աւազէն ցլացած լոյսը կապուտին հետ կխառնուի ու այնպէս կհասնի մեր աչքին՝ կանաչ երեւելով:

Ամպերուն շուքն ալ շատ կփոփոխէ ծովուն գոյնը:

Ինչո՞ւ համար ծովուն գոյնը տեղ տեղ դեղին կերելի, տեղ տեղ ալ կարմիր.

— Վասն զի տակի աւազը տեղ տեղ սաստիկ դեղին կլինի, տեղ ալ կայ որ կարմրագոյն է:

Բնութեան մէջի նիւթերէն ոմանք ինչո՞ւ սեւ են, եւ ոմանք գերմակ:

— Վասն զի ոմանց վրայ զարկած լուսոյ բոլոր Ֆառագայթներն ալ նոցա մէջ կընկղմին, ուստի սեւ կերելին. ոմանք ալ իրենց վրայ զարկած Ֆառագայթներուն ամէնն ալ ետ կցողացընեն, եւ գերմակ կտեսնուին:

Ինչէն է որ մարմիններէն ոմանք կարմիր են, ոմանք կապոյտ եւ ոմանք դեղին .

— Վասն զի ոմանք կարմիր ճառագայթները միայն ետ կցուցընեն, եւ մէկալ գոյները կծրծեն. ոմանք ալ կապոյտ կամ դեղին ճառագայթները միայն կցուցընեն, եւ մէկալները կծրծեն :

Ուսկի՞ց կուգայ մարմնոց այս յատկութիւնն որ այս կամ այն ճառագայթը ետ կցուցընեն ու մէկալները կծրծեն :

— Իրենց երեսին կազմութենէն եւ բնական շէնքին բնաւրձական բաղադրութենէն :

Ոսկորը ինչո՞ւ ճերմակ է .

— Վասն զի անհամար մանր խողովակներէ կազմուած է, որ անոնք ամէնն ալ ընդունած լոյսերնին ետ կցուցընեն եւ մէկ ճառագայթ մըն ալ չեն ծրծեր : Այս խողովակները այնչափ մանր են որ 600 հատը հազիւ թէ մէկ մազի հաստութիւն կունենան :

Ինչէն է որ ձիւնը, աղը, շաքարը, բամբակը եւ ասոնց նման շատ նիւթեր ճերմակ են .

— Վասն զի ասոնք անհամար մանր բիւրեղներէ եւ կամ այնպիսի մասնիկներէ ձեւացած են որ ընդունած լոյսերնին բոլորովին ետ կը ցուցընեն :

Բուսոց տերեւները ինչո՞ւ կանաչ են .

— Վասն զի անոնց մէջ գունաւոր հիւթ մը կայ որ *քուսաներկ* կըսուի, եւ այս գոյնը օդոյն թթուածինը ծծելով կսնանի :

Ինչո՞ւ համար բոյսերը նոր ծլած եւ ետքը հնացած ատեննին գունաւորափ կլինին .

— Վասն զի անոնց բուսաներկը կամ տիպս կլինի եւ կամ պակասած :

Ինչէն է որ օդ չառնող բոյսերը կանաչութիւն չեն ունենար .

— Վասն զի օդէն թթուածին չեն ծծեր որ իրենց բուսաներկը սնունդ առնուի :

Պտուղներուն այլ եւ այլ գոյներ ունենալուն պատճառն ի՞նչ է .

— Իրենց մէջի գունաւոր կամ ներկի նման հիւթերն են :

Ինչպէս կլինի որ ծծմբուտ թթուն պտղոց բիծերը լաթերուն վրայէն կհանէ .

— Վասն զի այն գունաւորող նիւթերը կըլուծէ՝ առանց լաթերը փճացընելու :

Նայելու է որ ետքէն լաթը լուացուի . ապա թէ ոչ՝ ածխային թթուն կրնայ լաթին թելերը փտտեցընել :

Ինչէն է որ ճրագի լուսով՝ կապոյտ գոյները կանաչ կերեւին .

— Վասն զի բոցին լոյսը դեղին է, եւ կասուին հետ որ խառնուի՝ կանաչ կլինի :

Շինծու գոյները կամ ներկերը երբոր երկար ատեն օդ տեսնեն՝ ինչո՞ւ կնետեն ու կփճանան .

— Վասն զի Ա, Յ, Օդէն թթուածին կծրծեն, առնով կերպով մը կայրին ու գոյներնին կնետեն .

Բ. Արեւուն տաքութեամբն ու լուսովը ներկերէն ոմանք կընկղմին կամ կլուծուին .

Գ. Երբեմն օդոյն խոնաւութիւնը եւ փոշին ներկերուն գոյնը կաւրեն :

Դոյնը ձայնին հետ ի՞նչ նմանութիւն ունի .

Ինչպէս որ լարի մը հաստութենէն՝ հանած ձայնը կփոփոխի, այսպէս ալ ո՛ր եւ իցէ թիթեղ թանձր կամ բարակ լինելուն համեմատ՝ այլ եւ այլ գունով կերելի, ինչպէս սապոնի պղպշակները : Բարակ ու ձիգ լարը սուր ձայն կհանէ . բարակ թիթեղն ալ կապոյտ ու մանուշակագոյն կերելի . հաստ ու թոյլ լարը հաստ ձայն կհանէ, թանձր թիթեղն ալ կարմիր գոյն կունենայ : Սեւ մակերեւոյթը՝ լուսոյ կողմանէ՝ ձայն չհանող նիւթերուն կնմանի :

ՄԵՏԱՂԱՏԵՍԱԿԻ ԵՒ ՄԵՏԱՂՔ.

Բնութեան մէջի զանազան մարմինները ի՞նչպէս կբաժնուին ըստ բնաւրձից .

— Պարզ եւ բաղադրեալ մարմիններ :

Բաղադրեալ մարմինը ո՞րն է .

— Բաղադրեալ կըսուին այն մարմինները՝ որոնցմէ այլ եւ այլ գոյացութիւններ կրնան ել-